

**Տ. ՆԱՐԵԿ ԱԲԵՂԱ ԱՎԱԳՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(2 հունվարի 2005 թ.)

«Եւ Ես ոխարեն ձեզ, որպէս և Տայր Իմ ոխարեաց Ինձ գարքապոթին»:

«Եվ Ես խոսդանում եմ ձեզ. ինչպէս և Իմ Տայրը Ինձ խոսդացավ տապու արքայությունը»:
(Ղոկ. Ի՛բ 29)

Սիրելի հավաքացյալ քոյքեր և նորայիններ, ահավասիկ մի նոր փարի է բացվեց մեր կենսընթացության հավերժազնաց ճամփի վրա, որ իր խորհրդով պետք է լիցքավորի մեր կյանքի մի նոր հանգրվանը՝ գալիք 365 օրերը դրոշմելով Ասքծո՞ մեզ հետ լինելու զաղափարով։

Մարդ արարածն արդյունք չէ սխալի և ոչ էլ պատահականության, նա արդյունք է սիրո, Երկնային Արարչի անսպառ սիրո, ուստի Ասքծո սիրո արդյունք հանդիսացող մարդը թեպենք մնողի պարբառով հեռացավ Ասքծոց, բայց Բարերար Ասքված երբեք չեռացավ մարդոց, այլ, ինչպէս Ավելարանն է ասում. «...մինչև իսկ իր միածին Որդուն դրվեց, որ պեսզի ով Նրան հավաքում է, չկորչ» (Հովի. Գ 6), իսկ իր միածին Որդու միջոցով արքայության խոսքում դպից մեզ. «Եվ Ես խոսքանում եմ ձեզ, ինչպէս և Իմ Տայրը Ինձ խոսդացավ փալու արքայությունը» (Ղոկ. Ի՛բ 29):

Դեպքը է իմանալ, որ ոմանք չեն փնտրում Ասքծո արքայությունը, այլ փախչում են նրանց. ոմանք փնտրում են, բայց չեն գրնում. ոմանք փնտրում և գրնում են, սակայն չեն պահում, իսկ ոմանք էլ փնտրում, գրնում և պահում են։

Ովքեր չեն փնտրում Ասքծո արքայությունը, այլ փախչում են նրանց, իրենց կյանքի բոլոր օրերում չեն դադարում սխալվելուց: Այս փորձության մեջ ընկնում են նրանք, ովքեր թեև հավաքացյալ անոն են կրում, սակայն բարի գործերից հեռացած են: Նրանք թեպեսին լեզվով հավաքում են, սակայն սրբով հեռացած են և գործով ուրանում են Ասքծուն՝ ըստ Տիրոջ հերկյալ խոսքի. «Չոր են Ինձ պաշտում. լեզվով են հավաքում, իսկ սրբով հեռացած մեկուսի են ինձանց» (Նմիք. Եսայի Ի՛բ 13):

Ուրիշներ փնտրում են Ասքծո արքայությունը, բայց չեն գրնում: Սրանք սնափառներն ու մարդահաճներն են, ովքեր պերճանում են փառասիրության հողմով, բարիք են գործում, սակայն փառամոլության պարբառով կորցնում են իրենց վարձքը. մարմնով մեռնում են, սակայն հոգով չեն ապրում. չարչարվում են, սակայն չեն հանգստանում. դանչվում են, բայց պասկի չեն արժանանում: Սրանց մասին Ավելարանը շադ հսկակ և կարճ ձևում է. «...այդ իսկ է նրանց վարձը» (Մաքթ. Զ 2, 5, 16): Այսպիսիների մասին Տերն

ասաց. «Միմյանցից եք փառք սրանում, իսկ միակ Աստծո փառքը չեք փնտրում» (Ռովի. Ե 44): Սրանց մասին է ասում նաև Դավիթ մարգարեն. «Տերը կցրի մարդահաճների ուկորները» (Սաղմ. ԾԲ 6):

Ոմանք փնտրում են ու զբնում, սակայն չեն պահում: Այդ նրանք են, ովքեր միատժամանակ հավաքում են, բայց փորձության պահին ընկրկում են և այս անցավոր կյանքի պատճառով զրկվում անանց կյանքից. մի փոքր ժամանակ վայելում են երկրի վրա և հսկիչունակությունը դժոխքում: Դիրավի, այսպես է, քանիզ ուրանում են Փրկչին ու Տիրոջը և կորչում առանց արժանանալու: Քրիստոսի խոսքումին: Սրանց մասին Քրիստոս ասաց. «Ով ուրանա Ինձ մարդկանց առջև, Ես եկ նրան կուրանամ Իմ Հոր և հրեշտակների առջև» (Մատթ. Ժ 33, Ղուկ. ԺԲ 9):

Ոմանք է փնտրում են Աստծո արքայությունը, զբնում են այն և պահում: Նրանք այնպիսի սիրով են միավորվում Աստծո հետ, որ աշխարհի բոլոր վայելքները ոչինչ են համարում, և որուն դժվարություն չի կարող նրանց բաժանել Աստծո սիրուց, ըստ Պողոս առաքյալի հետքայլ խոսքի. «Արդ՝ ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց. քառապանքը, թե՛ անձկությունը, վրանգմե՞րը, թե՛ սուրբ» (Խոռմ. Լ 35):

«Եսքը է այսպես փնտրենք Աստծո արքայությունը՝ անսասան հավաքքով, անմարելի հույսով և կապարյալ սիրով, որպեսզի կարողանանք զբնել այն և պահել: Ուստի Քրիստոսի կողմից մեզ ուղղված դաշտեսկօքի այս հրավերը մեծ խորհուրդ ունի իր մեջ. «Եվ ես խոսքանում եմ ձեզ... դալու արքայությունը» (Ղուկ. ԻԲ 29):

Աստծո արքայություն դանող ճանապարհը դժվարին է, քանի որ այն պահանջում է զոհաբերություններ՝ մեր եսից ու անձնականից, նյութից ու աշխարհայինից, նաև փշով է, քանի որ ենթադրում է դժվարություններ, որովհետև պետք է ծառայություն ու նախանձախընդուրություն ունենալ, և որպես որ թուլանա մեր նախանձախնդրությունը, այնքեն կսայթաքներ, և այդ ժամանակ կլսներ Տիրոջ հետքայլ խոսքը. «Ճշմարիկ եմ ասում ձեզ, որ ձեզ չեմ ճանաչում» (Մատթ. ԻԵ 12):

Աստծո արքայությունը մարդուս համար այն անկողողպետի երջանկությունն է, որ նրա կյանքը դարձնում է իմաստավոր ու նպատակասկաց և ոչ ինքնանպատակ ու, բնականարար, նաև ինքնավախճան:

Միրեկիներ, անուրանալի է այն փաստը, որ կյանքի խղական վագքը դեպի Աստծո արքայության փնտրությին և դեպի այն զբնելու երջանկությանն է ձգվում: Եթե երբեք ինարավոր լիներ, որ համաշխարհային հոգեբանական անդամալուծության ազդեցության ներքո բոլոր զգացմունքները մարեկին մարդկային կրծքի վրակ, ապա երջանկության զգացումը նրանցից միակ վերապրող պիտի լիներ, որովհետև այն սկիզբ է առնում ոչ թե երկրից կամ մարդկանցից, այլ երկնքից, այսինքն՝ Աստծուց:

Աշխարհի վրա դարբեր ժողովուրդներ և անհարդեր դարբեր դեղերում և դարբեր ձևերով փորձեցին փնտրել իրենց երջանկությունը, որի փնտրութը, սակայն, բյուրավոր կյանքեր խլեց ու դեռ խլելու է ոչ ճիշդ փնտրութի պարագային:

Աշխարհի խաչարված ճանապարհների վրա մարդկային սրբերներն անցնում ու դառնում են. ծիծաղի քրթիչները, լացի կոծերը, գոհունակության ժայիկները, պարպության հեկեկաններն ու հաղթանակի աղաղակները միմյանց լրեղն են զբաղեցնում: Ոմանք ուկուց,

ոմանք դիդմից, ոմանք սիրուց են փորձում խմել երջանկության փափառած շիթերը։ Դա հիճները՝ նահագակների արյունից, իսկ ժարդիրուսները բարապաներից ու կամովին հանձն առած փանջանցներից են խմում այն։ Եվ չկա մեկը, որ փառապանը սիրած լինի հենց բառապանքի համար։

Կյանքի նպարակը երջանկությունն է ու պիտի մնա այդպիսին։ Այլ կերպ ասած՝ մարդու նպարակն այդ երջանկության, այսինքն՝ Աստծո արքայության ժառանգորդ դառնալն է, քանզի միայն Աստծո արքայության մեջ մարդ կարող է մշտամնա ու հարազվարձ երջանկություն վայելել։

Այո՛, սիրելիներ, երջանկություն գրինելու փափազը փիեզերական է, իսկ նրան դիրեկու համար գործածված միջոցների կիրառումը, ավաղ՝ համամարդկային ընդորլմամբ սիսալ, քանզի Դիսուս շար պարզ և հսկակ ասաց. «Աստծո արքայությունը ձեր մեջ է» (Նմմք. Դոկ. ԺԷ 21):

Աշխարհի մեծագույն ապերջանիկները նրանք են, ովքեր իրենց երջանկությունն ապրում են արդարին պարագաների, արդարին ազդեցությունների թելադրանքով, փոխանակ այն իրենց ներսում փնտրելու։ Աշխարհի ապերջանկության մեծագույն պարբառն այս սիսալի մեջ է։ Մենք երսի թե շար պակելի ծանոթություն ունենք արդարին աշխարհի մասին, քան մեր անձին։ Մարդկանց մի մասն ինքն իր եելու օրուար ապրելու դժբախտ վիճակին է ենթարկել իրեն։ Իզոր դեղը չէ, որ դեռևս իին աշխարհի փիլիստիաներից մեկը՝ Սոլյրափը, պարգամել է. «Ծանեա զքեզ»։

Սիրելի բարեպաշտ հավաքրացյալներ, բացվող այս նոր դարին մեզ առիթ և իրավել է, որ հայենք դես մեր ներքին աշխարհը, այնպես գրիներ Աստծո պարկերով ու նմանությամբ սփեղդված մարդու անաղարդ պարկերը, ապա զգեստավորվենք երանով, քանզի Աստծու խոսքացավ՝ հավաքով լցված, հույսով ապրող և սիրով գործող մարդուն դարձնել Իր արքայության ժառանգորդը։

Ուստի եկեք հավաքրացյալներ, բացվող այս նոր դարին մեզ առիթ և իրավել է, որ հայենք դես մեր ներքին աշխարհը, այնպես գրիներ Աստծո պարկերով ու նմանությամբ սփեղդված մարդու անաղարդ պարկերը, ապա զգեստավորվենք երանով, քանզի Քրիստոս մեզ էլ դիմ՝ ասելով. «Եվ ես խոսքանում եմ ձեզ, ինչպես և իմ Նայրը ինձ խոսքացավ դայլու արքայությունը» (Դոկ. ԻՌ 29):

Ընորիք, այդ եւ խաղաղության եղիցին ընդ ձեզ և ընդ անհնիսիանն ամէն։